ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

---

ք. Աշտարակ　　　　　　　　　　　　2024թ. հուլիսի 15-ին, N 281 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՕՀԱՆԱՎԱՆԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԻՆԵ ՄԻՍԱԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման հավելված 3-ի 61-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Միսակյանի 2024 թվականի հուլիսի 12-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. ՀՀ Արագածոտնի մարզի «Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Միսակյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 15 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի հուլիսի 22-ից օգոստոսի 9-ը ներառյալ:

2.Նարինե Միսակյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գծով տեղակալ Արմինե Եղիազարյանի վրա:

3. Նարինե Միսակյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 12-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 16.07.2024 10:46:22 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457　　Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ